ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2012թ. սեպտեմբերի 19-ի նիստի

Գիտական խորհրդի 32 անդամներից ներկա էին 22-ը: Նախագահում էր գիտական խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ. Դավթյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը քաղաքացիական ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. դոկտոր Արմեն Հայկյանցին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Արմեն Հայկյանցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են պրոդեսորի գիտական կոչում շնորհելու մասին ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Տ. Դավթյանը, Վ. Քոչարյանը, Ս. Առաքելյանը, Ս.Մեղրյանը, Ա.Գաբուզյանը, Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. դոկտոր Արմեն Հայկյանցին շնորհել պրոֆեսորի գիտական կոչում:

Խորհրդի նախագահ *Գ. Ղազինյան*

Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*